

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

«.....» ..... 2009 թվականի N .....Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20 – ԻՆ ԿՆՔՎԱԾ  
N 4095 AM ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20-ին կնքված «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր» N 4095 AM վարկային համաձայնագրի շրջանակներում գնված գույքի, կառուցված խմելու ջրի ներքին ցանցերի, խմելու մայր ջրագծի նոր ճյուղի և օրական կարգավորող ջրամբարի (ՕԿՁ), ոռոգման համակարգի, ոռոգման ջրագծի և ջրընդունիչների, գազատարի, վերականգնված մայր ջրագծերի, ջրի ներքին ցանցերի և ջրընդունիչի, ջրի արտաքին ցանցի, ոռոգման ներքին ցանցի, ոռոգման ջրագծի և ջրընդունիչների, ոռոգման համակարգի, օրական կարգավորող ջրամբարների, օրական կարգավորող ջրամբարի ջրընդունիչ կառույցների, ջրահավաք ավազանի, կաթի ընդունման կետի շահագործումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի» շրջանակներում ձեռք բերված գույքի կազմից 539.379.910 դրամ արժողությամբ գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրաբերել համայնքներին՝ համաձայն N1 հավելվածի:

2. «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի» շրջանակներում խմելու մայր ջրագծերի և օրական կարգավորող ջրամբարի (ՕԿՁ) կառուցման, խմելու ջրի ներքին ցանցերի վերականգնման նպատակով կատարված ծախսերը՝ 476.269.294 դրամի չափով, ավելացնել համապատասխան համայնքների սեփականությունը հանդիսացող կառույցների հաշվեկշռային արժեքներին՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին և Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման գործընթացի իրականացումը:

4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության պայմանագրերի կնքումը համապատասխան համայնքների հետ՝ գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնելով համայնքների միջոցների հաշվին: Համապատասխան համայնքներին հանձնել կառուցված կամ վերականգնված օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև՝ կատարողական ակտերի մեկական օրինակները:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20 - ին կնքված N 4095 AM վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20-ին կնքված N 4095 վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է կառուցված ու վերականգնված օբյեկտների, գնված գույքի շահագործումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Տարիներ շարունակ անհրաժեշտ և բավարար ներդրումներ չապահովելու հետևանքով մի շարք համայնքներում շարքից դուրս են եկել ոռոգման ու խմելու ջրի համակարգերը, գազատարները: Պահանջվող քանակությամբ գյուղատնտեսական տեխնիկայի բացակայության պատճառով դժվարություններ են առաջացել հողի մշակման ու բերքահավաքի կազմակերպման գործընթացներում:

Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20- ին կնքված N 4095 վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող «Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության» ծրագիրը նախատեսում է՝ ծրագրի միջոցների հաշվին կառուցված, վերականգնված օբյեկտները և ձեռք բերված գույքը նվիրաբերել համապատասխան համայնքներին:

Սույն որոշման նախագծի կարգավորման առարկա են հանդիսանում «Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության» ծրագրի՝ «Համայնքի տնտեսական զարգացում» և «Գյուղատնտեսական խորհրդատվական համակարգի հզորացում» բաղադրիչների «Իրականացման ձեռնարկներում» նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած հարաբերությունները, մասնավորապես՝ համայնքներում կառուցված կամ վերականգնված օբյեկտների, ինչպես նաև՝ ձեռք բերված գույքի՝ համայնքներին նվիրաբերման և դրանց տնօրինման հանձնման հետ կապված հարաբերությունները:

«Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20 – ին կնքված N 4095 վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում ակնկալվում են հետևյալ արդյունքները.

- 42 համայնք կունենա անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկա,
- 19 համայնք կունենա խմելու ջրի մայր ջրագիծ, ջրատար,
- 17 համայնք կունենա խմելու ջրի ներքին ցանց, օրական կարգավորիչ ջրամբար, ջրընդունիչ,
- 1 համայնք կունենա ջրահավաք ավազան,
- 1 համայնք կունենա խմելու ջրի արտաքին ցանց,
- 2 համայնք կունենա ոռոգման համակարգ կամ ոռոգման ջրագիծ,
- 1 համայնք կունենա կաթի ընդունման կետ,
- 1 համայնք կունենա գազատար,
- Էականորեն կբարելավվի տվյալ համայնքների սոցիալ-տնտեսական վիճակը:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20 – ին կնքված N 4095 AM վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին**

«Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20 – ին կնքված N 4095 AM վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20 – ին կնքված N 4095 AM վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին**

«Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20 – ին կնքված N 4095 վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

## ՏԵՂԵԿԱԼՔ

**«Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20 – ին կնքված N 4095 վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին»  
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի առնչությամբ  
ՀՀ շահագրգիռ նախարարների առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ**

| Առարկությունների և առաջարկությունների հեղինակը (ամսաթիվը)  | Առարկությունների և առաջարկությունների բովանդակությունը  | Եզրակացություն   |
|--|---|--|
| <p>1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար</p> <p>01.09.09 թվական<br/>N 4/4- Ե-2-6066</p>   | <p>Առաջարկվում է նախագիծն համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի N 765 որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին ծրագրեր իրականացնող գրասենյակների գործունեության կազմակերպման կանոնակարգի 18-րդ կետի «բ» ենթակետի պահանջներին, համաձայն որի՝ ծրագրի շրջանակներում ձեռք բերված և ստացողներին տրամադրված դրամական միջոցներն ու նյութական արժեքները, եթե տրամադրվել են տեղական ինքնակառավարման մարմիններին կամ դրանց ենթակա հիմնարկներին և համայնքներին, ձևակերպվում և հաշվառվում են որպես փոխատվություն կամ դոտացիա:</p> | <p>Առաջարկությունը չի ընդունվում, քանի որ Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, եթե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են վավերացված պայմանագրերի նորմերը: Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20 – ին կնքված N 4095 Ջարգացման Վարկի Համաձայնագիրը վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2005 թվականի հոկտեմբերի 26-ին: Համաձայնագրի մաս կազմող՝ «Համայնքի տնտեսական զարգացման ծրագիր» գործառնական ձեռնարկի N 5 Հավելվածի («Համայնքի համագործակցության պայմանագիր») 5.2-րդ կետի համաձայն՝ ենթածրագրերի շրջանակներում կառուցված կամ ձեռք բերված գույքը ենթածրագրի ավարտից հետո «Շնորհառուին» է հանձնվում որպես նվիրաբերություն:</p> |
| <p>2. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար</p> <p>22.09.09 թվական,<br/>N 03/15/5349-09</p> | <p>Որոշման նախագծի վերաբերյալ նախարարությունն առարկություններ և առաջարկություններ չունի</p>   |  |
| <p>3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար</p> <p>13. 10. 2009 թվական<br/>N Ե - 5324</p>   | <p>Որոշման նախագծի մասին տրվել է պետական փորձագիտական եզրակացություն, համաձայն որի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:</p>   |  |